



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92

Fax /0322/ 2-07-70

թիվ \_\_\_\_\_

« \_\_\_\_ » \_\_\_\_\_ 2019թ.

Հայաստանի ամերիկյան համալսարանի Մանուկեան Սիմոն գործարարության և տնտեսագիտության ֆակուլտետի գործարար կառավարման մագիստրոսական ծրագրի ղեկավար, համակից պրոֆեսոր Ալեքսանդր Գրիգորյանին

.....  
Էլ.փոստ՝ [aleksandr@aua.am](mailto:aleksandr@aua.am)

Ձեր 2019թվականի դեկտեմբերի 4-ի գրությամբ.

Հարգելի պարոն Գրիգորյան.

Ձեզ եմ տրամադրում 2016թվականից ՀՀ Լոռու մարզպետարանում աշխատած ՀՀ Լոռու մարզպետի խորհրդական Աշոտ Վրույրի Մանուկյանի և ՀՀ Լոռու մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գրիգոր Մարտունի Հակոբյանի կենսագրությունները:

Տեղեկացնում եմ նաև, որ համաձայն ՀՀ Սահմանադրության 160-րդ հոդվածի 2-րդ մասի մարզպետներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ՀՀ կառավարությունը, իսկ մարզպետների տեղակալներին համաձայն «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ կետի մարզպետի առաջարկությամբ պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ՀՀ Վարչապետը: Մարզպետների և նրանց տեղակալների մասով Ձեզ անհրաժեշտ տեղեկատվությունը Դուք կարող եք ստանալ՝ դիմելով ՀՀ կառավարություն կամ ՀՀ վարչապետի աշխատակազմ:

Առդիր՝ 2 էջ:

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՂՈՒԿԱՅԱՆ

Գրիգոր Մարտունի Հակոբյան

Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ:

Ծնվել է 1958թ. մարտի 20-ին, Սպիտակի շրջանի Սարալանջ գյուղում:

1965-1973թթ. սովորել և ավարտել է Կիրովականի թիվ 15 միջնակարգ դպրոցը:

1973-1978թթ. սովորել և ավարտել է Կիրովականի Մելքոնյանի անվան շինարարական տեխնիկումը:

1977-1981թթ. աշխատել է Կիրովականի փոխանցումների խանութում:

1981-85թթ. աշխատել է Հյուսիսային Ղազախստանի Նիկոլաևսկի սովխոզում, որպես փոխտնօրեն:

1985-1997թթ. աշխատել է Հյուսիսային Ղազախստանում պետական փորձագիտական սովխոզ-կայանում, որպես մենեջեր:

1991-1998թթ. սովորել և ավարտել է Հյուսիսային Ղազախստանի պետական տնտեսագիտական ֆակուլտետը՝ ստանալով միջազգային տնտեսագետի որակավորում:

2001-2007թթ. աշխատել է որպես «Տաբա» ՍՊԸ-ի տնօրեն:

2007-2010թթ. աշխատել է որպես «Պոլի» ՍՊԸ-ի տնօրեն:

2001թ.-2010 հիմնել է գյուղատնտեսական հացահատիկային ֆերմային տնտեսություն և աշխատել է որպես ղեկավար:

2011թվականի հունվարի 18-ից աշխատել է որպես ՀՀ Լոռու մարզպետի օգնական:

2011-2018թթ. աշխատել է ՀՀ Լոռու մարզպետարանում որպես գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ:

Աշոտ Վրոյրի Մանուկյան

ՀՀ Լոռու մարզպետի խորհրդական

Ծնվել է 1951 թվականի փետրվարի 23-ին, ՀՀ Լոռու մարզի Փամբակ գյուղում:

1958-1968թ.թ. սովորել և ավարտել է Կիրովականի թիվ 11 միջնակարգ դպրոցը:

1968-1973թթ. սովորել և ավարտել է ԵրՊԻ Կիրովականի մասնաճյուղի շինարարական ֆակուլտետը:

1973-1974թթ. աշխատել է «Կիրշին» տրեստի թիվ 1 ՇՎ-ում, որպես տասնապետ:

1974-1975թթ. զորակոչվել է Սովետական բանակ:

1975-1978թթ. աշխատել է «Կիրշին» տրեստի թիվ 7 ՇՎ-ում, որպես աշխղեկ:

1978թ. նշանակվել է որպես շին.վերանորոգման վարչության գլխավոր ինժեներ:

1987թ. աշխատել է որպես շին.վերանորոգման վարչության պետ:

1993-1996թ.թ.աշխատել է որպես «Հասարակական և դպրոցական սննդի» կոմբինատի տնօրեն:

1996-1997թթ. նշանակվել է «Լոռառուսպաս» ՊԶ-ի գլխավոր տնօրենի տեղակալ՝ շինարարության գծով:

1997թ. ընդունվել է աշխատանքի ՀՀ Լոռու մարզպետարանի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնում, որպես պետ:

1998-2001թ.աշխատել է ՀՀ Լոռու մարզպետարանում որպես քաղաքաշինության և կոմունալ տնտեսության վարչության պետ :

2002-2016թթ. աշխատել է ՀՀ Լոռու մարզպետարանում, որպես աշխատակազմի ղեկավար:

2016-2018թթ. աշխատել է որպես ՀՀ Լոռու մարզպետի խորհրդական: